



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆՈՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Սեդրակ Ասատրյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի, Կարեն Սարգսյանի և Տարոն Սիմոնյանի,

քննության առնելով Պալատի նոր որակավորման հանձնաժողով կազմավորելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Պալատի խորհրդի 14.03.2016 թվականի թիվ 08/1-Ա որոշմամբ կազմավորվել է Պալատի որակավորման հանձնաժողով՝ մինչև 2018 թվականի մարտի 14-ը պաշտոնավարման ժամկետով:

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ **փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված ժամկետով՝ ութ անդամի կազմով, ներկայացուցչության հերկյալ համամասնությամբ՝**

1) փաստաբանների պալատի նախագահը, որն ի պաշտոնե որակավորման հանձնաժողովի նախագահն է, և փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրված չորս անդամ:

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ:

3) Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայից մեկ գիտնական իրավաբան՝ այդ հաստատության ղեկավարի ներկայացմամբ:

4) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանից (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) մեկ դատավոր՝ վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ:

20 մարտի 2018թ.

թիվ 6/9-Ա

Պալատի կանոնադրության 18.2 կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ երկու տարի ժամկետով...*

Պալատի կանոնադրության 18.4 ենթակետի համաձայն՝ Պալատի նախագահի կողմից որպես որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամներ առաջարկվել է փաստաբաններ Արմեն Հայկյանցի (արտոնագիր № 80), Լյուդվիկ Դավթյանի (արտոնագիր № 1416), Գառնիկ Թուխտարյանի (արտոնագիր № 531) և Մանե Կարապետյանի (արտոնագիր № 828) թեկնածությունները, որոնք խորհրդի կողմից ընտրվել են 20.03.2018թ.:

(պարբերությունը լրացվել է 21.01.2019թ. թիվ 2/14-Ա որոշմամբ)

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Պալատը ստացել է որակավորման հանձնաժողովի անդամների թեկնածությունների առաջարկներ համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայից և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանից:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ 14.03.2016թ. երկու տարի պաշտոնավարման ժամկետով կազմավորված որակավորման հանձնաժողովի լիազորությունների ժամկետն ավարտվել է,

Ի գիտություն ընդունելով այն հանգամանքը, որ խորհրդի կողմից 21.01.2019թ. փաստաբան Լյուդվիկ Դավթյանի փոխարեն, որպես որակավորման հանձնաժողովի անդամ ընտրվել է փաստաբան, ի.գ.թ. Հունան Տեր-Վարդանյանը (արտոնագիր № 1108),

(պարբերությունը լրացվել է 21.01.2019թ. թիվ 2/14-Ա որոշմամբ)

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետի և Պալատի կանոնադրության 16.5 (4), 18.2, 18.4 կետերի պահանջներով, Պալատի խորհուրդը միաձայն,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կազմավորել Պալատի որակավորման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- 1) **Արա Ջոհրաբյան՝** ի.գ.թ., Պալատի որակավորման հանձնաժողովի նախագահ (ի պաշտոնե).
- 2) **Արմեն Հայկյանց՝** ի.գ.դ., պրոֆեսոր, փաստաբան (արտոնագիր № 80).
- 3) **Հունան Տեր-Վարդանյան՝** ի.գ.թ., փաստաբան (արտոնագիր № 1108).
(կեդր փոփոխվել է 21.01.2019թ. թիվ 2/14-Ա որոշմամբ)
- 4) **Մանե Կարապետյան՝** ի.գ.թ., փաստաբան (արտոնագիր № 828).
- 5) **Գառնիկ Թուխտարյան՝** փաստաբան (արտոնագիր № 531).
- 6) **Անահիտ Անտոնյան՝** ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ, ՀՀ արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ.
(կեդր փոփոխվել է 23.07.2019թ. թիվ 14/9-Ա որոշմամբ)
- 7) **Գառնիկ Սաֆարյան՝** ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչ, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող.

8) **Ելիզավետա Դանիելյան՝** ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ,
ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր:

2. Սահմանել, որ Պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու փարի ժամկետով՝ մինչև 2020 թվականի մարտի 20-ը:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Պալատի որակավորման հանձնաժողովի նորընտիր անդամներին, ինչպես նաև ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

**20 մարտի 2018թ.
թիվ 6/9-Ա
ք. Երևան**